

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋ

Տասնամյակներ շարունակ տնտեսագիտության պոստուլատները մնացել են նույնը, իսկ ավանդական տեսությունը խնամքով ուսումնասիրում է միայն հավասարակշիռ, միջին, ընդհանուր իրավիճակներն ու դեպքերը, հնարավորություն չունենալով նկարագրել, ինչպես նաև համեմատել տնտեսական սուբյեկտների տարբերակված իրավիճակների մասնակի դեպքերը: Այսօր մարդկությունը կանգնած է համակարգային և արմատական փոփոխությունների առջև՝ նոր առաջադրույթներ թելադրելով տնտեսագիտության տեսությանը: Պահանջվում են տնտեսական կյանքի նոր լուծումներ, նոր կանխադրույթներ ու սկզբունքներ: Հավասարակշռության մաթեմատիկական մոդելներն ու մտահայեցական գրաֆիկները չեն արտահայտում երևույթների իրական վիճակը: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մակրոտնտեսագիտության միկրոտնտեսագիտական հիմքերի հետ կապերի խնդիրը: Հարկ է նկատել, որ մակրոտնտեսագիտությունն ըստ էության, օրգանապես սկիզբ է առնում միկրոտնտեսագիտության դրույթներից ու պոստուլատներից: Ինչպես նկատում է ամերիկյան տնտեսագետ Պ.Հաուիթը. «Լուկասը և Սարջենթը պնդում են, որ քեյնսյան մակրոտնտեսագիտության «հիմնարար» թերությունը ամուր միկրոհիմքերի բացակայությունն է: Անթիվ-անհամար ուսանողներ և գործնական մարդիկ դժգոհում էին առարկայի «տարօրինակ» բնույթի համար, որի երկու հիմնական ճյուղավորումները աշխարհին ուղղված արմատապես տարբերվող հայացքներ են: Միասնության այս բացակայությունը պետք է անհանգստացներ տնտեսագետներին: Յանկացած գիտական շարադրանքում ֆրանգմենտար մեկնաբանումները ինտելեկտուալ առումով բավարար չեն և արդարացիորեն կոչվում են ad hoc մեկնաբանություններ: Տեսությունները, որոնք կիրառման մի ոլորտից մյուսին անցնելիս կարիք ունեն փոփոխությունների, նոր կիրառումների կամ նոր տվյալների ի հայտ գալու դեպքում համընդգրկուն օրենքներ չեն տալիս և հղի են կործանման»¹:

Եվ իրոք, ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ միկրո- և մակրոտնտեսագիտությունների միջև գոյություն չունեն հստակ մեթոդական կապեր ու կախվածություններ: Այդպիսիք չկան նաև այդ երկու մակարդակներում կառավարման գործընթացներում: Բանն այն է, որ թե մեկ, թե մյուս մակարդակներում հաշվարկների մեթոդիկաներն ունեն սկզբունքային տարբերություններ: Մասնավորապես, մակրոցուցանիշները չեն ներառում միկրոցուցանիշների կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ ինքնարժեքը, հետևապես անտեսվում է տնտեսության արդյունավետության այնպիսի մի շատ կարևոր ցուցանիշ, ինչպեսին նյութատարության ցուցանիշն է: Ի վերջո, արդյունավետության ցուցանիշները մակրոտնտեսագիտության մեջ հաշվարկվում են բոլորովին այլ եղանակով. այստեղ գլխավորը տնտեսական աճի ցուցանիշներն են, ինչպես օրինակ աճի տեմպը (ընթացիկ տարվա ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա ՀՆԱ-ին) և տնտեսական հավելաճի տեմպը (ՀՆԱ-ի տարբերությունը հարաբերած բազային տարվա ՀՆԱ-ին): Իրականում դրանցով բնութագրվում է ազգային տնտեսության գործունեության արդյունավետությունը: Հարց է առաջանում՝ իսկ եթե ՀՆԱ-ի հավելաճ գոյություն չունի: Արդյո՞ք դա նշանակում է, թե տնտեսությունը չի զարգանում: Մինչդեռ այդ դեպքում տնտեսությունը կարող է զարգանալ որակապես, ինչը ենթադրում է նյութա-, ֆոնդա-, աշխատատարության իջեցում, որն ըստ էության կնշանակի ոչ այլ ինչ, քան տնտեսական զարգացման արդյունավետության համակցված արժեքային ցուցանիշի, կամ որ

¹ Хауитт П. Макроэкономика: отношения с микроэкономикой//Экономическая теория/ под ред. Дж.Итуэлла, М. Милгейта, П. Ньюмена: Пер. с англ./Науч. ред.чл.-корр. РАН В.С.Автономов.-М.:ИНФРА-М, 2004,- с.485.

նույնն է ինքնարժեքի իջեցում: Այնուամենայնիվ այս ցուցանիշները, ինչպես նաև արտադրության շահութաբերության մակարդակը մակրոտնտեսագիտության մեջ չեն հաշվարկվում: Ամեն դեպքում ոչ միկրոցուցանիշների հաշվառման մեթոդիկայով:

Անհրաժեշտություն է դառնում հստակեցնել կապը տարբեր հարթությունների ցուցանիշների միջև, տալ տնտեսական սուբյեկտների տարբերակված վիճակները, որի արդյունքում նշանակալի չափով մեծանա տնտեսության ցանկացած մակարդակի, սկսած միկրոմակարդակից մինչև միջերկրային մեզամակարդակների վերլուծությունների և կանխատեսումների հնարավորությունները:

Ընդհանրապես հավասարակշռվածության խնդիրը նոր լուսաբանումների կարիք ունի հենց տնտեսագիտական մտքի զարգացման տրամաբանությամբ: Հաճախ տնտեսական երևույթների վերլուծությունների ժամանակ ավելի շատ գործ ենք ունենում պայմանական չափորոշիչների հետ, որոնք հատակ պատկերացում չեն տալիս տնտեսական համակարգի իրական վիճակի մասին: Ժամանակի ու տարածության մեջ արտաքուստ պարզ թվացող տնտեսական ցուցանիշները իրենց խորքային շերտերում նոր տեսանկյուններ ու մոտեցումներ են ենթադրում, որոնք դժվարությամբ են տեղավորվում հավասարակշռության տեսության քառակուսու սահմաններում: Այս առումով, հաշվի առնելով տնտեսական բազմաթիվ պարամետրերի ազդեցությունը (գների ինդեքս, տեղեկատվական համաչափություն, ինստիտուցիոնալ գործոնների հաշվառում, տեխնոլոգիական պարամետրեր, սպառողական ճաշակներ և այլն), ապա որպես շահույթի աղբյուր ներկայանում է հասարակական ինտելեկտն իր ամբողջական և մասնակի դրսևորումներով¹: Թերևս հենց այսպես կարելի է բացատրել մարդու զարգացման պատմությունը, տնտեսական աճը, հիմք ընդունելով անկենդան և կենդանի բնության բաղադրիչների, ինտելեկտով կարգավորման օրենքի գործողությունը: Նկատենք, որ մարդու զարգացման պատմությունը ճանաչողության զարգացման պատմություն է, և այդ ճանապարհին մարդը փորձում է իր վարքագիծը իրագործել ինտելեկտի հենքի վրա: Այլ խոսքով, ռեսուրսների, հատկապես բնական, ցանկացած միավորի օգտակար գործողության գործակիցը մարդու ինտելեկտի շնորհիվ մեծանում է՝ իր արտահայտությունը գտնելով արտադրված ապրանքի արտադրողականության բարձրացման մեջ: Դժմարիտ է այն, որ տնտեսության մեջ տարբեր արտադրողների մոտ գոյություն չունեն նույնատեսակ ապրանքների արտադրության հավասար ծախսեր, որ շուկայական գինը ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի համընկման արդյունք չէ, այլ տվյալ ապրանքի վաճառողի ու գնորդի միջև փոխանակման անհատական ակտի արդյունք, որն ի վերջո հետևանք է երկկողմանի օգուտի համաձայնության: Տնտեսության մեջ, ինչպես հայտնի է, գոյություն ունեն անհատական շուկայական գների անվերջ, դինամիկ բազմազանություններ, որոնք ոչ մի կերպ չեն ձգտում միասնական մակարդակի, այսինքն հավասարակշռության, այս պատճառով էլ շուկայում չի կարող գործել միասնական շուկայական հավասարակշիռ գին: Ինչ վերաբերում է ապրանքների արտադրությանը, ապա վերարտադրության յուրաքանչյուր շրջապատույտի դեպքում մարդու ինտելեկտի շնորհիվ օգտագործված ռեսուրսների միավորի հաշվով ապրանքային թաղանթի մեջ ծագում է ինչպես նյութաիրային, այնպես էլ էներգետիկ հավելում (լրիվ մեխանիկական էներգիայի ձևով), որոնք հասարակական շուկայական մեխանիզմի շնորհիվ արժեքային ձևով իրացվում են իբրև շահույթ (հավելյալ արժեք): Փաստորեն շահույթի ծագումն անհրաժեշտ է ներկայացնել ոչ միայն արժեքային, այլ նյութաիրային տեսանկյուններից, հիմք ընդունելով մարդկային ինտելեկտը: Այլ խոսքով, շահույթի բնույթը կանխորոշող ֆիզիկական, էներգետիկ և արժեքային գործոնները տրամաբանորեն համադրվում են էներգիայի պահպանման համընդհանուր օրենքի հետ: Նկատենք, որ այս օրենքի գործողությունը չի խախտվում, քանի որ ապրանքի միավորի վրա բնական զանգվածի նվազագույն ծախսերի դեպքում վերջինիս պոտենցիալ էներգիան տնտեսության մեջ ավելի ու ավելի շատ է օգտագործվում՝ ի հաշիվ ցանկացած նոր ապրանքի

¹ Социально-экономические проблемы формирования и расширенного воспроизводства интеллектуального капитала в современной России: Материалы международной научно-практической конференции, 10 ноября 2006 г. – М.: РГСУ, 2007. – С. 27.

բաղադրիչների կանոնակարգման: Իսկ վերջինս իր հերթին բավարար հիմք է նոր արժեքի, տվյալ դեպքում հավելյալ արժեքի կամ շահույթի համար: Բնականաբար, այստեղ իր զգալի դերակատարությունն ունի մարդկային ինտելեկտն ընդհանրապես: Թվում է, թե գործ ունենք դիալեկտիկայի համընդհանուր օրենքի հետ, որն, ըստ էության, պայմանավորում է ողջ մարդկային հասարակության զարգացման գործընթացը: Այն իր մեջ ներառում է հակադրությունների պայքարի և միասնության, քանակական փոփոխություններից որակականին անցման և հակառակը, բացասման բացասումի օրենքները: Իսկ այս օրենքները, ինչպես գիտենք, «բացահայտում են համապատասխանաբար զարգացման աղբյուրը, մեխանիզմը և ուղղությունը»¹:

Ի վերջո, մարդն իր տնտեսական գործունեության ընթացքում՝ հիմք ընդունելով ելակետային բաղադրիչների ծախսերի տնտեսումը, հետամուտ է առավելագույն շահույթի ստացման: Այս գործում, բնականաբար, մեծ է մարդկային ինտելեկտի դերը: Վերջինս հանդես գալով որպես գիտատեխնիկական առաջընթացի հոգևոր ինտելեկտուալային հենք՝ վերարտադրության ողջ գործընթացում ձևավորում է նոր հասարակական հարաբերություններ, որակային նոր մակարդակ ունեցող հասարակարգ:

Նոր մեկնություններով կարելի է բացատրել նաև համաշխարհային տնտեսության ռենտային բնույթը. այստեղ առկա է տարբեր երկրների շերտավորում ըստ միջին շնչին ընկնող եկամտի և բարեկեցության մակարդակների: Համաշխարհային տնտեսությունը ներկայացնող առանձին երկրներ իրարից տարբերվում են նույնամուն արտադրանքի տարբեր ինքնարժեքներով՝ պայմանավորված օբյեկտիվ բնակլիմայական, տարածաշխարհագրական պայմաններով, զարգացող երկրների տնտեսությունների ցածր տեխնոլոգայնությամբ: Համաշխարհային տնտեսության կառուցվածքը այնպիսին է, որ այն խթանում է շահույթի բարձր նորմա ունեցող տնտեսությունների զարգացմանը: Ընդ որում, համաշխարհային տնտեսության ժամանակակից կարգը՝ ելնելով «անտեսանելի ձեռքի» սկզբունքի գործողությունից, բոլորովին չի ապահովում տնտեսության օպտիմալ սոցիալական կացութաձև: Շնորհիվ արդյունավետ տնտեսության, կյանքի որակը բարձր է այն երկրներում, որտեղ արտադրվում է առավել արդյունավետ արդյունք: Եվ համաձայն մեծ թվերի օրենքի, համաշխարհային շուկայական գինը ձգտում է դեպի մնամատիպ երկրների արտադրության գներին, ավելի ու ավելի հեռանալով համաշխարհային արտադրության գնից, միաժամանակ մեկուսացած, փակ երկրների ազգային տնտեսությունները նետելով դեպի սնանկացման որոգայթը: Թերևս սրանով պիտի բացատրել Հյուսիսի և Հարավի պետությունների եկամուտների միջև առկա ճեղքվածքի ուժեղացող միտումը: Եվ, եթե հիմք ընդունենք համաշխարհային տնտեսության ռենտային բնույթը, ապա դժվար թե ճշմարիտ դիտվի տնտեսական աճի հիմնահարցի միանշանակ ընկալումը (ինչն արվում է տնտեսագիտության ավանդական հավասարակշռության տեսության կողմից): Բանն այն է, որ տարբեր երկրներում, որոնք գտնվում են տարբեր տնտեսական պայմաններում, օբյեկտիվորեն ձևավորվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության տարբեր ծախսեր, շահույթի տարբեր նորմաներ և տոկոսներ, արտադրական կապիտալի, հետևաբար նաև ինվեստիցիաների տարբեր արդյունավետություններ: Չի բացառվում, որ առանձին երկրներում առանձին ժամանակահատվածներում միջին ազգային շահույթ ընդհանրապես չձևավորվի: Ահա թե ինչու շահույթի ցածր նորմա ունեցող երկրներում առկա է աշխատավարձի ցածր մակարդակ, որն ըստ էության աշխատանքային ռեսուրսների ավելցուկի առկայության դեպքում հետևանք է արտադրանքի արտադրության ծախսերի ամեն գնով տնտեսման: Ուստի նման երկրներում ինվեստիցիաները չեն վերածվում երկկողմանի երթևեկությամբ ֆինանսական փոդոցի: Այս իմաստով անիմաստ է դառնում համաշխարհային ճգնաժամից դուրս գալու միասնական դեղատոմսի մասին խոսելը կյանքի տարբեր որակներ ունեցող երկրների համար:

¹ Кириленко Г.Г.,Шевцов Е.В. Философский словарь.Справочник студента.-М.:Филологическое общество “Слово”, ООО, “Изд-во АСТ”, 2002-с.172.

Եվ, չնայած ժամանակակից պայմաններում «արևմտականացված» տնտեսագիտության տեսության մեջ գերիշխում է տնտեսական աճի լիբերալ կոնցեպցիան, տարբեր երկրներում ի հայտ են գալիս տնտեսական աճի ամենատարբեր տեսություններ, որոնք հաճախ չունենալով վերջնական ձևակերպումներ, այնուամենայնիվ ազգային տնտեսությունների համար որոշակի լուծումներ ու մոտեցումներ են ենթադրում: Բնականաբար, ցածր ծախսեր և շահույթի բարձր նորմա ունեցող երկրների համար ձեռնառու են համաշխարհային տնտեսության ազատականացումը, ազատ տնտեսական սահմանները:

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ արդի պայմաններում տնտեսագիտության տեսության դասական, մարքսիստական, նեոդասական, քեյնսյան, մոնետարիստական և այլ ուղղություններն ավելի շատ հարցեր են առաջադրում, քան պատասխաններ: Այսօր շատ դրույթներ ու փաստարկներ կարիք ունեն վերանայման՝ վերստուգվելով նոր մեթոդոլոգիական սկզբունքների ու հետազոտական նոր արդյունքների չափանիշներով:

ՍԱՐԻՆԵ ԱՂԱՅԱՆ, տ.գ.թ.

*ՀՊԾՀ ընդհանուր տնտեսագիտության
ամբիոնի դոցենտ*

Համառոտագիր

Ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ միկրո- և մակրոտնտեսագիտությունների միջև գոյություն չունեն հստակ մեթոդական կապեր ու կախվածություններ: Ժամանակի ու տարածության մեջ արտաքուստ պարզ թվացող տնտեսական ցուցանիշներն իրենց խորքային շերտերում նոր մոտեցումներ են ենթադրում, որոնք դժվարությամբ են տեղավորվում հավասարակշռության տեսության քառակուսու սահմաններում: Հավասարակշռության խնդիրը նոր լուսաբանումների կարիք է զգում հենց տնտեսագիտական մտքի զարգացման տրամաբանությամբ՝ կապված տնտեսագիտության տեսության տարբեր հարթությունների միջև ցուցանիշների կապի հստակեցման առումներով:

Բանալի բառեր. մակրոտնտեսագիտություն, միկրոտնտեսագիտություն, հավասարակշռություն, ինքնարժեք, տնտեսական աճ, մարդկային ինտելեկտ, կյանքի որակ, շահույթի նորմա:

ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ ПЕРЕД НОВЫМИ ЗАДАЧАМИ

МАРИНЕ АГАЯН, к.э.н.

*доцент кафедры общей экономики
Государственного инженерного университета Армении*

Аннотация

В современной экономической теории нет четких методических связей и зависимостей между макро- и микроэкономикой. Экономические показатели, внешне кажущиеся простыми во времени и в пространстве, в своих глубинных слоях предполагают новые подходы, которые с трудом укладываются в рамках квадрата теории равновесия. Задача равновесия нуждается в новых пояснениях с точки зрения именно логики развития экономической мысли в связи с уточнением взаимосвязей между показателями различных уровней экономической науки.

Ключевые слова: макроэкономика, микроэкономика, равновесие, себестоимость, экономический рост, человеческий интеллект, качество жизни, норма прибыли.

NEW CHALLENGES THE ECONOMIC THEORY FACES

MARINE AGHAYAN, Candidate of Sciences (Economics)

*Associate Professor
Department of General Economics
State Engineering University of Armenia*

Abstract

In the contemporary economic theory clear methodological relations and linkages between micro-and macroeconomics are lacking. Seemingly easy economic indicators (from the point of view of space–time) require new approaches, since they don't completely describe equilibrium theory: list of variables used in the system of equations is not complete. The issues on equilibrium require new methods reflecting the logic behind new developments in the contemporary economic thought that builds linkages between micro-and macroeconomic processes to clarify the set of variables in the system of equations.

Keywords: macroeconomics, microeconomics, equilibrium, per-unit cost, economic growth, human intellect, quality of life, rate of profit.